

—Պատմ. նոր Կսակարանի (տպ. 1871, Երուսաղէմ) .

—Հովուական Աստուածաբանութիւն (տպ. 1892, Պոլիս) .

—Մեկնութիւնք եպիսկոպոսի Զմիւռնիոյ՝ Լեւոնականի առ Տ. Կարապետ երէց Սեբեան: (տպ. 1896, Կալայ) .

—Պատմ Շանչեանց (տպ. 1898, Թիֆլիս) .

—Պատմ. Քրիստոնեական եկեղեցւոյ (տպ. 1898, Կալայ) .

Տեսնել ընդարձակ կենսագրութիւնը Գիււտ Ա. քհ. Աղանեանցի ստորագրութեամբ՝ Լոււայ, 1903 էջ 222—28:

ՄԵԼՔԻՍԵՆԴԵԿ ՎՐԴ. ԵՐՁՆԿԱՅԻ. — Մբ. 1680 ին. կը պաշտօնավարէր Ռեմէլի Ս. Գէորգ վանքին մէջ: Հաւանաբար այս վրդ.ին յիշատակն է արձաթեայ ոսկեղօծ և ականակուռ գօտի մը, որու երեսին վրայ գրուած է «Տէր իմ Յս. Ք. որդի Այ.» իսկ ետեւի կողմը «պահեա՛ գմեկքիսեղեկ վրդ.ն թուին ՌձԺ. (= 1661) (Յուց. պ.):

ՄԵԼՔԻՍԵՆԴԵԿ ՎՐԴ. ՀՈՎԻԻԵԱՆ, ԵՐՁՆԿԱՅԻ. — Մբ. Ծ. 1874 ին. Զո. 1909 ին. կը մեկնի Քէմախ, ուր կը նահատակուի 1915 ին:

ՄԵԼՔԻՍԵՆԴԵԿ ՎՐԴ. ՆՈՐԱՎԱՆՅԻ, ՍՍՐԳԻՍԵԱՆ. — Մբ. Զո. 1851 ին. աւագանի անուն Բարսաղաւ: Կը մեկնի վանքէն 1857 ին, կը վերադառնայ 1859 ին:

ՄԵԼՔԻՍԵՆԴԵԿ ՎՐԴ. ՆՈՐԱՎԱՆՅԻ. — Մբ. 1851 ին կը վախճանի Վանի մէջ:

ՄԵԼՔԻՍԵՆԴԵԿ ՔՀ. ՄՈԿԱՅԻ. — Մբ. 1636 ին Ս. Յակոբի վանքին մէջ կ'ընդօրինակէ Պատկերագրոյ Առեստրան մը և կը յիշատակէ նոյն վանքին. յիշատակարանը կ'ընդօրինակենք հոս. «... ոմն քհյ. անուամբ կոչեցեալ Մեկքիսեղեկ Մոկացի. որ և գործոպս հեռի եմ յամ. բարութեանց ցանկացայ Ածախաւս սբ. աւետարանիս. գոր վաղուց փափաքէի ապաւինելով ի մարդասիրութիւն Այ և ի սրբոց բարեխօսութիւն: Արդ՝ սկսայ մեղսաթաւալ անձամբ և անարուեստ ձեռաւք և մեղսամած մատամբս ի սբ քաղաքս Երսղմ. ընդ հովանեաւ սբ Յարութեան և լուսաբուղիս սբ զերեղմանին քսի. և կափարիչ սբ. վէմին և սբ. բանտին, և սբ Յակոբայ գլխաղիւր սբ. գերեղմանին և սբ. Յակոբայ տեառնեղբար գերեղմանին և սբ տաճարին և սբ. Հրեշտակա-